ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԻԼԻԹ ՎԻԿՏՈՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌԴ-ԱՄՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԻԳ. 00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2024

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ЛИЛИТ ВИКТОРОВНА ДАЛЛАКЯН

ЮЖНОКАВКАЗСКИЕ ЭТНОПОЛИТИЧЕСКИЕ КОНФЛИКТЫ В КОНТЕКСТЕ ГЕОПОЛИТИЧЕСКИХ ИНТЕРЕСОВ РОССИИ И США

АВТОРЕФЕРАТ

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23. 00.02 – “Политические институты и процессы”

ЕРЕВАН-2024

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Գ. Մ. Քեռյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քաղաքական գիտությունների դոկտոր՝ Վ. Ս. Դավթյան

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Գ. Ա. Բալասանյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ Պետական Կառավարման Ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024թ. սեպտեմբերի 20-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ ԲՈԿ-ի Երևանի պետական համալսարանում գործող «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդի նիստում: Մասնագիտական խորհրդի հասցեն է՝ ՀՀ Երևան- 0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2024թ. օգոստոսի 1-ին:
056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, քաղաքական գիտությունների թեկնածու՝
Գ. Է. Պետրոսյան

Тема диссертации утверждена в Ереванском государстненном университете.

Научный руководитель: доктор политических наук, профессор Г. М. Керьян

Официальные оппоненты: Доктор политических наук В. С. Давтян

кандидат исторических наук, доцент Г. А. Баласанян

Ведущий организация: Академия Государственного Управления РА

Защита диссертации состоится 20 сентября 2024г, в 15.00, на заседании действующего в ЕГУ РА специализированного совета 056 "Политические науки и международные отношения", ВАК РА. Адрес специализированного совета: РА, Ереван-0025, Алек Манукян 1.
С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ РА.

Автореферат разослан 1 овгуста 2024г.
Научный секретарь специализированного совета, кандидат политический наук Г.Э.Петросян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ուսումնասիրության թեմայի արդիականությունը պայմանավորված է Հարավային Կովկասում ռուս-ամերիկյան աշխարհաքաղաքական սրացող մրցակցության համատեքստում հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների ծագումնաբանությունը և լուծման բանալիները բացահայտելու անհրաժեշտությամբ, որը կարող է կարևոր նշանակություն ունենալ տարածաշրջանային անվտանգության և խաղաղության համար:

Նորագույն պատմության մեջ աշխարհաքաղաքական հսկայական նշանակություն ունեցած Խորհրդային Միության փլուզումից և նրա տարածքում՝ այդ թվում Հարավային Կովկասում նոր պետությունների ստեղծումից հետո, ժամանակակից աշխարհակարգի ձևավորման ժամանակաշրջանում հարավկովկասյան էթնոքաղաքական «սառեցված» հակամարտությունների «արթնացման» շրջանակներում համաշխարհային ուժային հայտնի կենտրոնները, մասնավորապես՝ ՌԴ-ն ու ԱՄՆ-ը և տարածաշրջանային դերակատարություն ունեցող պետությունները ակտիվորեն ներգրավվեցին Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Աբխազիայի հիմնախնդիրների բազմաշերտ հորձանուտի մեջ և բնականաբար, հետապնդելով իրենց շահերը այդ հակամարտությունների կարգավորման գործընթացները դարձրեցին իրավիճակի կառավարման կարևոր լծակներ: ԽՍՀՄ-ից ժառանգած և նախկինում քողարկված հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների «արթնացումը» ժամանակագրական առումով համընկավ գորբաչովյան վերակառուցման ժամանակաշրջանին և առավելագույնս թեժացավ Խորհրդային Միության փլուզումից ու Հարավային Կովկասում երեք նոր պետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հռչակումից հետո:

Այդ ամենի գիտական ուսումնասիրության անհրաժեշտությունը վերստին պայմանավորում է ատենախոսության թեմայի արդիականությունը, որի շրջանակներում կատարված վերլուծությունները, կանխատեսումները, եզրակացությունները և առաջարկությունները ինչ որ չափով կարող են օգտակար լինել գիտագործնական առումով:

Ընդհանրապես պատմության թատերաբեմից միութենական պետության անհետացումը և նրա տարածքում նոր պետությունների ստեղծումը, հետպատերազմյան աշխարհաքաղաքական փոփոխությունները, երկբևեռ աշխարհակարգից միաբևեռի անցումը հսկայական նշանակություն ունեցան միջազգային հարաբերությունների ժամանակակից համակարգի զարգացման համար՝ մասնավորապես քողարկված փուլից ակտիվ դրսևորման փուլ թևակոխած էթնոքաղաքական հակամարտությունները դարձնելով միջազգային անվտանգության սպառնալիքներից մեկը: Այդ տեսակետից

ուսումնասիրության մեջ փաստական հարուստ նյութի համակողմանի վերլուծության արդյունքում փորձ է կատարվել Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական հայտնի կենտրոնների՝ մասնավորապես, ՌԴ-ԱՄՆ մրցակցության համատեքստում ծանրանալ Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի և Հարավային Օսիայի էթնոքաղաքական հակամարտությունների ծագման պատճառներին, դրանց նմանություններին ու առանձնահատկություններին, զարգացման փուլերին, բանակցային գործընթացին, միջնորդական առաքելությունների անհաջողության պատճառներին՝ ներկայացնելով վերոհիշյալ հակամարտությունների հանգուցալուծման հնարավոր տարբերակները: Ակնհայտ է, որ համաշխարհային ու տարածաշրջանային բարդ ու հակասական զարգացումների ու հայտնի մարտահրավերների և աշխարհաքաղաքական գործընթացների միտումների պայմաններում՝ մասնավորապես, Հարավային Կովկասի ժողովուրդները երկար ու բարդ բանակցային ճանապարհ պետք է անցնեն հակամարտությունների արդարացի լուծման համար,հակառակ պարագայում հարավկովկասյան տարածաշրջանը կդառնա արյունալի բախումների ու անկայունության թատերաբեմ: Հենց այս ամենով ու երկարատև խաղաղություն հաստատելու հրամայականով է պայմանավորված ուսումնասիրության թեմայի արդիականությունը և գիտագործնական կարևորությունը՝ Հարավային Կովկասում ընթացող ռուս-ամերիկյան աշխարհաքաղաքական մրցակցության պայմաններում բացահայտելու հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների լուծման բանալիները՝ հասկանալի պատճառներով շեշտը դնելով արցախյան հիմնախնդրի արդարացի հանգուցալուծման վրա:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ Հարավային Կովկասում ՌԴ-ԱՄՆ աշխարհաքաղաքական շահերի բացահայտման համատեքստում հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների հանգուցալուծման փնտրտուքը կարևոր նշանակություն կունենա նոր մարտահրավերներին ու սպառնալիքներին դիմագրավելու համար՝ մասնավորապես նպաստելով արցախյան հիմնախնդրի լուծման շրջանակներում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության արդիականացմանը ու ժամանակի պահանջներին համարժեքորեն արձագանքելուն:

Ատենախոսության թեմայի արդիականությունը ամփոփված է այն նպատակների և խնդիրների մեջ, որոնք հանգամանորեն ներկայացված են ուսումնասիրության ներածության համապատասխան էջերում՝ բյուրեղանալով և ամբողջանալով սույն ատենախոսության գիտական նորույթի և տեսական ու կիրառական նշանակության շրջանակներում:

Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը: Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների

հիմնախնդիրները լայնորեն լուսաբանվել են մասնագիտական գրականության մեջ:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի ծագումնաբանության, պատմական, քաղաքական, իրավական, միջազգային իրավունքի, կարգավորման գործընթացի զանազան հարցերին են անդրադարձել Շ.Ավագյանը[1], Ա.Մանասյանը[2], Վ.Պետրոսյանը[3], Տ.Թորոսյանը[4], Գ.Իսկանդարյան, Հ.Ղազարյան, Մ.Մալխասյան, Ս.Պետրոսյան, Վ.Քոթանջյան հեղինակային խումբը[5], Յու. Բարսեղովը[6], Վ.Կազիմիրովը[7] (ԵԱՀԿ Մինսկի խմբում ռուսաստանցի նախկին համանախագահ), Խ.Գալստյանը[8], Տ.Քոչարյանը[9], Վ.Բալայանը[10], Թոմաս դե Վաալը[11] և այլ հեղինակներ:

Արցախյան հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ Ռուսաստանի և ԱՄՆ-ի դիրքորոշումները լուսաբանվել են Մ.Աղաջանյանի գիտական հոդվածներում[12]:

---

[1] Ավագյան Շ., Լեռնային Ղարաբաղ, Իրավական ասպեկտներ, երկրորդ հրատարակություն, «Տիգրան Մեծ», Եր. 2010թ., 88 էջ:

[2] Մանասյան Ա., Ղարաբաղյան հիմնախնդիր: Փաստարկներ և փաստաթղթեր, «Տիգրան Մեծ» Եր. 2005թ., 48 էջ, Մանասյան Ա., Արցախ-Ադրբեջան հակամարտություն, Հիմնախնդրի իրավական բաղադրիչներ, «ՎԵՄ» համահայկական հանդես, թիվ 2 (62), 2018թ., էջ 195-223:

[3] Պետրոսյան Վ., Պետությունների միջազգային իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշները: Արցախի և Կոսովոյի դեպքերը, «Շուշիի ազատագրման 25-ամյակին նվիրված գիտաժողովի գիտական ընթերցումներ (հոդվածների ժողովածու), Արցախի պետական համալսարանի հրատարակչություն, Ստեփանակերտ, 2017թ.,: Պետրոսյան Վ., Ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված պետությունների կայացման խնդիրն ու կապը միջազգային ճանաչման հետ, Հայկական քաղաքագիտական հանդես, 2 (8), 2017թ., էջ 31-64:

[4] Թորոսյան Տ., Լեռնային Ղարբաղ և Կոսովո, Հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Տիգրան Մեծ հրատ., Երևան 2012թ., 408 էջ, Թորոսյան Տ., Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2008թ., 340էջ:

[5] Իսկանդարյան Գ., Ղազարյան Հ., Մալխասյան Մ., Պետրոսյան Ս., Քոթանջյան Վ., Հիմնական փաստեր Ղարաբաղի հակամարտության մասին, Երևան 2006-2008թթ.:

[6] Барсегов Ю.Г. «Нагорный Карабах в международном праве и мировой политике». Комментарии к документам. Том II / Д. ю. н., проф. Ю.Г. Барсегов; отв. ред. А.О. Меликян — М. : «Мелихово», 2009. — 480 с.

[7] Казимиров В.Н. Мир Карабаху. Посредничество России в урегулировании нагорно-карабахского конфликта. - М.: Междунар. отношения, 2009. 456 с..

[8] Գալստյան Խ., Քաղաքական բանակցություններ: Տեսություն և պրակտիկա, «Վան Արյան», Երևան 2007թ., 228 էջ:

[9] Քոչարյան Տ., Անդրադարձ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին առնչվող խորհրդային շրջանի իրավաքաղաքական որոշ իրադարձություններին, Գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, 2015թ., էջ 139-145:

[10] Բալայան Վ., Արցախի պատմություն, «Ամարաս», Երևան 2002թ., 440 էջ:

[11] Թոմաս Դե Վաալ, Սև այգի: Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղության և պատերազմի միջով, լրացված և խմբագրված հրատարակություն «Զանգակ» հրատ., Երևան 2014թ., 488էջ:

[12] Агаджанян М., Отношения России и США к статус-кво в зоне карабахского конфликта, “Глобус энергетическая и региональная безопасность”, 2010, N 5, с. 12-16, Աղաջանյան Մ., Փորձագիտական ընկալումը և ԱՄՆ դիվանագիտական փորձը ղարաբաղյան կարգավորման առնչությամբ, «Գլոբուս էներգետիկ անվտանգության», 2011թ. N 2, էջ 38-44:

Ատենախոսության հետ կապված հիշարժան են նաև թուրք լրագրող և քաղաքական գործիչ Մ. Այդինի[13] և Ս. Կորնելի[14] ուսումնասիրությունները, որոնցում մասնավորապես լուսաբանվել են ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման հարցում Թուրքիայի անկողմնակալ դիրքորոշում որդեգրելու անհրաժեշտության և բանակցային գործընթացում հակամարտության բոլոր կողմերի լիարժեք մասնակցության կարևորության հիմնահարցերը:

Հիշարժան է նաև հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտություններին նվիրված Ս.Կորնելի[15] մեկ այլ աշխատություն, որը նվիրված է Հարավային Կովկասում (Լեռնային Ղարաբաղ, Աբխազիա, Հարավային Օսիա) և Հյուսիսային Կովկասում (Դաղստան, Ինգուշ-Օսական թնջուկ) գոյություն ունեցող հակամարտություններին՝ դրանց կարգավորման գործընթացները ներկայացնելով ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Եվրամիության, Իրանի և Թուրքիայի շահերի համատեքստում:

Այդ տեսակետից ուշագրավ են նաև այլ հեղինակների աշխատությունները[16]:

Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների, չճանաչված և դե ֆակտո գոյություն ունեցող այլ պետությունների (Թայվան, Կոսովո, Մերձդնեստր, Սոմալի) պատմության նախընթաց անցքերին, վերոհիշյալ հակամարտությունների հետ կապված ռազմական գործողություններին, կարգավորման գործընթացների առանձնահատկությունների ու նմանությունների բացահայտմանն են նվիրված մի շարք ուսումնասիրություններ, որոնցում մասնավորապես լուսաբանվել են չճանաչված պետությունների ճանաչման վրա ազդող գործոնները և դրանում այլ երկրների աջակցության հետ կապված խնդիրները, ազգերի ինքնորոշման իրավունքի մեկնաբանության և գործնականում դրա կիրառմանն առընչվող հարցերը, ինքնորոշման իրավունքի հիման վրա առաջացած երկրների կայացման գործընթացը և կապը միջազգային ճանաչման հետ՝ կարևորելով նաև չճանաչված պետությունների քաղաքական համակարգի կայունության հանգամանքը[17]:

---

[13] Aydin M., Turkish policy toward Cout Caucasus, “The quarterly journal”N 3, 2004 pp 22-28. Айдин М. Роль региональных держав-Турция. “Кавказ-сотрудничества ради стабильносьти” организованной Грузинским Фондом стратегических и международных исследований 19-21 октября 2007, 72с.

[14] Cornell S., Turkey and the Conflicts in Nagorno Karabakh. Adelicsate balance. “Middle Eastern Studies”; 1998, Vol. 34, N 1, p. 211.

[15] Cornel S., Small Nations and Great Powers: A Study of Ethnopolitical Conflict in the Caucasus, London and New York, Routledge Curzon, 2001, p. 489

[16] Gerrits A., Bader M. Russian patronage over Abkhazia and South Ossetia: implications for conflict resolution, East European Politics 2016, vol. 2, N 3, pp 297-313; Bartuzi W., Peczunska-Natecz., Strachota K., Abkhazia, South Ossetia, Nagorna karabakh: Unfrozen conflicts betueen Russian and the west Center for Eastern Studies, 2008, pp. 1-8.

[17] Stʹu Macfarlane N., Sabanadze N. Sovereignty and self-determination: Where are we? International jornal: Canadas Jornal of Global Policy Analysis, 2013, vol 68 N 4, pp. 609-627; Czachor R, Between

Աբխազիայի և Հարավային Օսիայի հիմնախնդիրների պատմական, իրավական, քաղաքական ասպեկտներին, կարգավորման գործընթացների նրբերանգներին, 2008թ. օգոստոսյան պատերազմի շրջանակներում ու դրանից հետո վրաց-հարավօսական համակարտություններին են անդրադարձել Գ.Նոդիան[18], Պ.Զաքարեիաշվիլին[19], Վ.Զախարովը, Ա.Արեշևը և Ե.Սեմերիկովան[20], Գ.Ժորժալիանին, Լ.Թոիդձեն և Ս.Լեկիշվիլին[21], Դ.Պետրոսյանը[22], Վ. Չերիկբան[23], Ա.Ցիգանոկը[24], ինչպես նաև այդ հարցերը լուսաբանվել են գիտական այլ հրապարակումներում[25]:

Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների հանգուցալուծման տարբերակների վերլուծությանն են նվիրված Սելասի[26], Ռ.Աբդուլատիպովի[27], Կ.Գաջիևի[28], Ս. Մինասյանի[29] և Ա.Քոլեյի ու Միտչելի[30] աշխատությունները, որոնց հրապարակ գալը հիմնականում պայմանավորված էր 2008թ. օգոստոսյան պատերազմից հետո գիտական շրջանակների կողմից հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների նկատմամբ դրսևորած հետաքրքրությամբ:

Sustainability and Uncertainty. Political systems of Abkhazia, South Ossetia and Nagorna-karabakh Resbublic-conditions and features, Sectio 2015, vol 12 N 1, pp 151-163.

[18] Нодия Г., Конфликт в Абхазии: национальные проекты и политические обязательства. Грузини и абхазиы: Путь к примирению. Ред. Брунко Коппитерс и др. М: Весь мир. 1998.

[19] Закареишвили П. Грузия и конфликты на ее территории, Кавказское соседство: Турция и Южний Кавказ, "Институт Кавказа", Ереван, 2008, 171с.

[20] Захаров В.А., Арешев А.Е., Семерикова Е. Ф., Абхазия и Южная Осетия после признания: Исторический и современний контекст, "Русская панорама. 2010, 520с.

[21] Жоржалиани Г., Тоидзе М., Лекишвили С., Историческии политико-правовие аспекти грузино-осетинского конфликта, "Самшолбло", Тбилиси, 1995, 256с.

[22] Петросян Д., Непризнанные страны Южного Кавказа в 2008г. Прецеденты и перспективы Ежегодник Института Кавказа, Ер. 2010, 211 с.

[23] Черибка В., Урегулирование грузино-абхазского конфликта в контексте Черноморской Абхазии, Аспекти грузино-абхазского конфликта /13/, Стамбул, 24-27 июня, 2006, 294с.

[24] Трансформация конфликтов и пути установления мира на Южном Кавказе: Российско-Армянски государственный университета, Ереван, 2004, 174 с., Южний Кавказ-Нестабилный регион "Замароженных" конфликтов: Материали международной конференции по Кавказу фонд Фридриха Эберта, Берлин, 26-27 ноября, 2011, 360с.

[25] Цыганок А.Д., Война на Кавказе 2008. русский взгляд. Грузино-осетинская война 8-13 звгуста 2008года, "АИРО", М. 238с.

[26] Celac S., Prospects of a stability pact for the caucasus, "Caucasian regional studies" vol. 5, N 1, USA, 2008.

[27] Абдулатипов Р. Кавказ: Кто хозяин на "троне богов", "Национальный интерес", N 2 июнь 2008.

[28] Гаджеев К.С., Большая игра: на Кавказе. Вчера, сегогня, завтра, Международные отнашения М. 2010.

[29] Минасян С., Роль ЕС в урегулирования конфликтов на Южном Кавказе: Европейские ценности и геополитика на пороге «Восточного партнерства».

[30] Cooley A., Mitchell L. Georgia's Territorial Integrity "The American Lnterest magazine", may, june 2010. p. 69.

Թեմայի ուսումնասիրության շրջանակներում որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների հարցում արևմտյան երկրների վարած քաղաքականությանը նվիրված ուսումնասիրությունները, որոնցում կարևորվում է Միացյալ Նահանգներ-ԵՄ երկրներ տանդեմի կողմից Աբխազիայի և Հարավային Օսիայի հետ այսպես կոչված «Ներգրավում առանց ճանաչման» քաղաքական կուրսի իրականացումը, այն համարելով Ռուսաստանի Դաշնությանը Հարավային Կովկասից մեկուսացնելու միակ հնարավորությունը[31]:

Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների պատճառների, առանձնահատկությունների և նմանությունների, կարգավորման գործընթացների մի շարք հարցերին են անդրադարձել Պ.Կոլստոն և Հ.Բլակիսրուդը[32]: Ջ. Օլաֆլինի, Վ.Կոլոսովի և Ջ.Տոալի ուսումնասիրությունը[33] նվիրված է Աբխազիայի, Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Մերձդնեստրի հիմնախնդիրների որոշ ասպեկտների:

Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների բնույթին, լուծման հնարավոր ուղիներին, շահագրգիռ պետությունների շահերի բացահայտման և չճանաչված պետությունների ներքին կայունությանը նվիրված հարցերին է անդրադարձել Ն.Կասպերսենը[34]:

Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Աբխազիայի հակամարտությունների պատմությանը, հանգուցալուծման հնարավորություններին, այդ չճանաչված պետությունների հետ այլ երկրների փոխհարաբերությունների, տարածաշրջանային անվտանգության, սփյուռքի օժանդակության հարցերն է լուսաբանել Է.Սուլեյմանովը[35]:

---

[31]Zielonka J. Transatlantic realations. Beyond the CFSR, the Risks of Uncoordinated Transatlantic Strategies Aldatlantic strategies Aldershot UK: Ashgate, 2001, p.63-80, Nwil Macfarlane SW. western Engagement in the Gaucasus and Gentral Asia London: Royal Institut of International Affairs 1999; Бруно Коппитерс, Политика Запада в области безопасности и грузино- абхазский конфликт (Бруно Коппитерс, Давид Дарчиашвили, Нателла Акаба (ред.). Практика федерализма. Поиски алтернатив для Грузии и Абхазии. М. 1995, с. 18-71.

[32] Kolsto P., Blakkisrıd H. Living with Non-recognition: State- and Nation-building in South Caucasian Quasi-States, Europe-Asia Studies, 2008, vol 60, N 3 pp.483-509.; Blakkisrud H., Kolsto P., facto statehood: the Sout Caucasian De Facto states between secession and sovereignty, Southeast European and Black Sea studies, 2012 , vol 12, N 2 pp. 281-298.

[33] O'Loughlin J., Kolossov V., Toal D., Inside the Post-Soviet de facto states: A. Comparison of Attitudes in Abkhazia, Nagorny Karabakh, South Ossetia, and Transnestria. Eurasian Gesgraphy and Economics, 2015, pp. 1-34.

[34] Caspersen N., Separatism and Democracy in the Caucasus, Survival: Global Politics and Strategy 2008, vol 50, N4, pp. 113-136.

[35] Souleimanov E., Understanding Ethnopolitical: conflict Karabakh, South Ossetia, Abkhazia, Prague, Palgrave Macmillan, 2013, 249 p.

Հարավային Կովկասի էթնոքաղաքական հակամարտությունների պատմությանը և կարգավորման գործընթացին է անդրադարձել Ք. Զուրչերը[36]:

Թեմայի ուսումնասիրության հետ կապված որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Յ.Խարալամբիդիսի աշխատությունը[37]: Դ. Գելդենհեյսի աշխատության մեջ ներկայացված են չճանաչված պետությունների պատմությանը և զարգացման հեռանկարներին վերաբերող մի շարք հարցեր, որտեղ անդրադարձ է կատարվել նաև Աբխազիայի, Հարավային Օսիայի և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրներին[38]:

Հարավային Կովկասում ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականության և տարածաշրջանային անվտանգության հարցերի լուսաբանմանն են նվիրված Ի.Մուրադյանի աշխատությունները[39]:

Թեմայի ուսումնասիրության շրջանակներում որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Յու. Ցուրգանովի և Ա.Իսկանդարյանի[40], Ն.Կոսոլապովի[41], Կ.Գաջիևի[42], Ս. Մարկեդոնովի[43] և Ա. Ցիգանոկի[44] աշխատությունները:

Թեմայի ուսումնասիրության հետ կապված արժեքավոր են նաև Մ.Պետրոսյանի[45], Ա. Կարապետյանի[46], Ա.Ազիզիյանի[47], Վ. Մանուկյանի[48], Ե.

---

[36] Zurcher CH., The Post-Soviet Wars, New Vork and London, Nuw Vork University press, 2007. p. 289.

[37] Խարալամբիդիս Յ., Տրոյական պատերազմը և «Պրահայի հախճապակին», Կիպրոսի, Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի հակամարտությունների համեմատական վերլուծություն «21-րդ Դար» թիվ 2 (54), 2014թ. էջ 5-41:

[38] Geldenhuys D., Contested states inb World Palitics: Polgrave Macmillan, London, 2009.

[39] Мурадян И., Политика США и проблемы безопасности региона Южного Кавказа, Е. “Антарес”, 2000, 195с.; Мурадян И., Региональная политика США и Великобритании: Турция-Иран-Южный Кавказ-Черноморье, Е. “Антарес”, 2008, 744 с.

[40] Цурганов Ю.С., Искандарян А., Южный Кавказ между изоляцией и интеграцией; генезис и перспективы. “Издательское исследовательское и просветательское содружество Посев N 1 (1588). М. январь 2010.

[41] Косолапов Н.А., Конфликы постсоветского пространства и современная конфликтология, “Мировая экономика и международные отношения” N 10 М. 1995.

[42] Гаджиев К.С., Геополитика Кавказа, “Международные отношеия. М. 2001.

[43] Маркедонов С., Турбулетная Евразия, “Академия”, М. 2010, 260с., Маркедонов С. Де факто государства постсоветского пранстсраства, Непризнаные гостдартсва, “Научные тедради института Восточной Еворпы, вуп. 1 М. 2006.; Маркедонов. С. Угрозы безопасности на Южном Кавказе, “Вестник Евопы” 2002; N 7-8; Маркедонов С. Еворпы”, Де факто образивания постсоветского пространтсва. Двадцать лет государственного страительства. Аналитические доклады института Кавказа N 5. Ер. 2012, 180с.

[44] Циганок А.Д., Пороховая бочка Евразии, Милитаризация Кавказа угражает опасными последсвиями, “Независимое военное обазрения” М. 2 сентября, 2009.

[45] Պետրոսյան Մ., Հարավային Կովկասի հակամարտությունների և դրանց կարգավորման գործընթացների ընդհանրություններուն ու առանձնահատկությունները, Ատենախոսություն քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան 2020թ., 186 էջ:

Վարդազարյանի[49] և Հ.Սարգսյանի[50] ատենախոսությունները, որոնց մի շարք գաղափարներ, տեսակետներ ու մոտեցումներ ներկայացված են սույն ուսումնասիրության մեջ:

Ատենախոսության մեջ վերոհիշյալ աշխատություններից բացի օգտագործվել են նաև միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված տարաբնույթ փաստաթղթեր[51]:

Արժանին մատուցելով այն հսկայածավալ աշխատանքին, որը կատարվել է Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի, և Հարավային Օսիայի հիմնախնդիրների տարաբնույթ ասպեկտները լուսաբանելու ուղղությամբ հարկ է նշել, որ հրապարակի վրա չկա ՌԴ-ԱՄՆ աշխարհաքաղաքական շահերի

---

[46] Կարպետյան Ա., Ղարաբաղի ինքնորոշման հիմնախնդրի արդիականացումը ժամանակակից քաղաքական գործընթացների համատեքստում, Ատենախոսություն քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան 2019թ. 179 էջ:

[47] Ազիզյան Ա., Հարավային Կովկասի էթնոքաղաքական հակամարտությունների համեմատական վերլուծությունը, Ատենախոսություն քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան 2012թ, 161 էջ:

[48] Մանուկյան Վ., Հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունների կայացման առանձնահատկություններն ու հեռանկարները, Ատենախոսության քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան 2020թ. 322էջ:

[49] Վարդազարյան Ե., ԱՄՆ, ԵՄ ԵՎ ՌԴ ռազմավարությունը Հարավային Կովկասում ընթացող աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում, Ստենախոսություն քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան 2013թ. 172 էջ:

[50] Սարգսյան Հ., Հարավային Կովկասում տարածաշրջանային քաղաքական գործընթացների վրա «փափուկ ուժի» ազդեցության մեխանիզմները, Ատենախոսություն քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան 2019թ. 183էջ:

[51] Մանրամասն տե՛ս Բիշքեկյան արձանագրություններ, 1994-ի մայիսի 5, Bishqekyan ard'anagrut'yunner, 1994-i mayisi 5 (Bishkek Protocols, May 5, 1994,) https://blognews.am/arm/news/265256/1994-i-mayisi-5-y-bishqekyanardzanagrutyuny. html in Armenian), CASE CONCERNING MILITARY AND PARAMILITARY ACTIVITIES IN AND AGAINST NICARAGUA, San Francisco, 27 JUNE 1986, https://www.icjcij. org/public/files/case-related/70/070-19860627-JUD-01-00-EN.pdf, Declaration on the Occasion of the 50th Anniversary of the United Nations : resolution / adopted by the General Assembly. UN. General Assembly (50th sess. : 1995-1996), New York, 9 Nov. 1995, Definition of Aggression, United Nations General Assembly Resolution 3314, New York, 14 December 1974, http://hrlibrary.umn.edu/instree/GAres3314.html, International Alert 2009, London,// Диалоговый процесс по гарантиям безопасности в контексте грузино-абхазского конфликта, INTERNATIONAL COURT OF JUSTICE, Frontier Dispute (Burkina Faso/Republic of Mali), https://www.icj-cij.org/en/case/69, San Francisco, 1983, Internationalization of Ethnic Conflicts and Impact on Regional and International Security, Journal of Political Sciences & Public Affairs, USA, December 07, 2017, RESOLUTIONS ADOPTED BY THE FIRST ORDINARY SESSION OF THE ASSEMBLY OF HEADS OF STATE AND GOVERNMENT HELD IN CAIRO, UAR, Cairo, FROM 17 TO 21 JULY 1964, Text of resolution 390 A (V) adopted on 2 December 1950 by the General Assembly of the United Nations, Annexes (p. 74-89), New York, 1950, UN MISSION IN KOSOVO, NewYork, 10 June 1999, https://unmik.unmissions.org/unitednations-resolution-1244, United Nations Security Council Resolution 1674, New York, April 28, 2006, https://www.un.org/ruleoflaw/blog/document/security-council-resolution-1674-2006-onprotection- of-civilians-in-armedconflict/

համատեքստում հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտություններին նվիրված որևէ ուսումնասիրություն: Այդ տեսակետից սույն ատենախոսությունը մի համեստ փորձ է ինչ որ չափով այդ բացը լրացնելու համար:

Հետազոտության նպատակը: Ատենախոսության նպատակը հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների ընթացքի վրա ՌԴ-ի և ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական մրցակցության, հակամարտության և այդ երկրների շահերի խաչաձևման ազդեցությունը վերհանելն է: Հետազոտության նպատակը առավելագույնս կուռ և ամբողջական ներկայացնելու հրամայականով պայմանավորված վերլուծության են ենթարկվել Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Աբխազիայի հակամարտությունների ծագման պատճառները, դրանց նմանությունները, առանձնահատկությունները, զարգացման փուլերն ու բանակցային գործընթացի ժամանակագրությունը: Հիմնավորվել է, որ էթնոքաղաքական խնդիրների լուծումը պահանջում է դրանց համակողմանի վերլուծություն, տարաբնույթ մոտեցումների մշակում, գործուն ու արդյունավետ մեխանիզմների ներդրում, հակամարտող կողմերի անկեղծ ցանկություն գտնելու խաղաղ և երկարաժամկետ լուծումներ՝ գիտակցելով, որ այլընտրանքը կործանարար պատերազմներ են, որի պարագայում Հարավային Կովկասը կդառնա անկայունության և արյունալի հակամարտությունների գոտի, ինչն անկասկած երկարաժամկետ կտրվածքով սպառնում է նաև միջազգային անվտանգությանն ու խաղաղությանը՝ իր հետ բերելով, մասնավորապես, հումանիտար աղետ, փախստականների խնդիր, ահաբեկչական վտանգներ և այլ սպառնալիքներ: Արձանագրելով, որ այսօր առավել քան երբևէ, Հարավային Կովկասը կանգնած է ընտրության առջև, դառնալ հակամարտությունների թատերաբեմ, թե անվտանգության և խաղաղ գոյակցության կղզյակ աշխարհում, ուսումնասիրության մեջ ներկայացվել են համապատասխան մոտեցումներ հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների լուծման վերաբերյալ, որոնք բյուրեղացվել են հետազոտության նպատակների շրջանակներում: Վերոհիշյալ նպատակին հասնելու համար ուսումնասիրության ընթացքում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

1) վերլուծել հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների ծագումնաբանությունը, դրանց նմանությունները, առանձնահատկությունները, զարգացման փուլերն ու բանակցային գործընթացի ժամանակագրությունը և այդ հակամարտությունների հնարավոր լուծման ուղիները,

2) բացահայտել այն գործոնները, որոնք խանգարում են հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների լուծմանը (մասնավորապես, միջնորդական առաքելություն իրականացնող երկրների

շահերի անհամատեղելիություն կամ բախում, միջազգային իրավունքի նկատմամբ հակամարտող կողմերի անվստահություն, աշխարհաքաղաքական և տարածաշրջանային փոփոխություններ, էթնիկ խնդիրների լուծման բարդություն, բանակցելու մոտիվացիայի բացակայություն, նախկինում իրականացված խաղաղարար առաքելությունների անարդյունավետություն),

3) հետազոտել այն գործոնները, որոնք կարևոր պայման են հանդիսանում Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի և Հարավային Օսիայի հակամարտությունների լուծման համար (մասնավորապես, միջնորդական առաքելություն իրականացնող պետությունների ընկալումը, որ կոնֆլիկտի լուծումը անհրաժեշտ է իրենց շահերի համար, միջնորդական առաքելության հարցում հակամարտող կողմերի վստահությունը, բոլոր առումներով առավել ուժեղ հակամարտող կողմի կոնստրուկտիվ քայլերը, որովհետև որպես կանոն տնտեսապես առավել զարգացած և ռազմական առումով հզոր կողմն է սկսում պատերազմական գործողությունները, հակամարտող կողմերի զինաթափումը և ռազմական հավասարակշռության պահպանությունը, աջակցությունը կողմերին քաղաքական, հումանիտար, տնտեսական, սոցիալական և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում, գիտակցումը, որ կոնֆլիկտը չի կարող լուծվել ռազմական ճանապարհով, «ամեն ինչ կամ ոչինչ» կարգախոսից հրաժարումը, բնակչությանը խաղաղության նախապատրաստելը և երկարատև բանակցությունների պաստրաստ լինելը),

4) համակողմանի վերլուծության ենթարկել հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտություններում ռուս-ամերիկյան աշխարհաքաղաքական մրցակցությունը, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծման տեսլականը ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացման շրջանակներում, 2020թ. 44-օրյա պատերազմը ՌԴ-ԱՄՆ դիրքորոշումների համատեքստում, այդ պատերազմում համաշխարհային և տարածաշրջանային դերակատարների որդեգրած քաղաքականության ազդեցությունը Մոսկվա-Վաշինգտոն մրցակցության վրա,

5) Հարավային Կովկասում ռուս-ամերիկյան աշխարհաքաղաքական շահերի շրջանակներում բացահայտել տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրները՝ շեշտադրելով այդ հարցում հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների լուծման անհրաժեշտությունը:

Ուսումնասիրության օբյեկտը: Ռուս-ամերիկյան աշխարհաքաղաքական շահերի համատեքստում հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների լուծման հիմնախնդիրն է:

Ուսումնասիրության առարկան: Հարավային Կովկասում ռուս-ամերիկյան աշխարհաքաղաքական շահերի համատեքստում հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների առաջացման դրդապատճառների և լուծման բանալիների փնտրտուքն է՝ շեշտադրելով արցախյան հիմնախնդրի

հանգուցալուծման տեսլականը ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացման շրջանակներում:

Հետազոտության մեթոդաբանությունը: Հետազոտությունն իրականացնելիս կիրառվել են բովանդակային և դիսկուրս վերլուծության, գործընթացային հետազոտության մեթոդները:

Համագիտական մեթոդներից օգտագործվել են դիալեկտիկական, համակարգային, նկարագրական և համեմատական մեթոդները, իսկ ընդհանուր գիտական մեթոդներից կիրառվել են անալիզը, սինթեզը, ինդուկցիան և դեդուկցիան: Վերոհիշյալ մեթոդները համադրվել են պատմական ու համեմատական մեթոդների հետ, որի հանրագումարում առավելագույնս ամբողջացել են հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը և եղանակները՝ հիմք հանդիսանալով ուսումնասիրության գիտական նորույթը ներկայացնելու համար:

Ատենախոսության գիտական նորույթը:

Հետազոտության գիտական նորույթը Հարավային Կովկասում Մոսկվա-Վաշինգտոն աշխարհաքաղաքական շահերի համատեքստում և տարածաշրջանային մերօրյա զարգացումների նորովի գնահատման ֆոնին՝ Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի և Հարավային Օսիայի հակամարտությունների ծագումնաբանության և դրանց լուծման բանալիների տեսական ու մեթոդաբանական հիմքերի փնտրտուքն ու մշակումն է՝ ելակետային ու հիմնարար համարելով հետազոտության գործնական նշանակությունն ու կիրառելիությունը: Վերոհիշյալի շրջանակներում ուսումնասիրության մեջ ստացվել են գիտատեսական ու կիրառական նորույթ պարունակող ներքոհիշյալ արդյունքները՝

1. Հարավային Կովկասում ռուս-ամերիկյան աշխարհաքաղաքական շահերի համատեքստում նորովի են լուսաբանվել Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի և Հարավային Օսիայի էթնոքաղաքական հակամարտությունների ծագումնաբանությունը, զարգացման փուլերը, առանձնահատկություններն ու ընդհանրությունները, հանգուցալուծման բանալիները, կարգավորման գործընթացի վրա ազդող գործոններն ու խոչընդոտները, միջազգային իրավունքի սկզբունքների կիրառման բարդությունները, հետկոնֆլիկտային փուլի մարտահրավերների հաղթահարման ուղիները:

2. Բացահայտվել են Հարավային Կովկասում ՌԴ-ԱՄՆ աշխարհաքաղաքական այսօրվա մրցակցության տարաբնույթ ասպեկտները, նրանց շահերի բախման բնույթն ու ուղղությունները և այդ ամենում տարածաշրջանային երկրների (Հայաստան, Իրան, Վրաստան, Թուրքիա, Ադրբեջան) ընդգրկվածության աստիճանն ու զանազան այլ գործոններ, որոնք մեծապես ազդում (եթե չասենք կանխորոշում են) հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների հանգուլածման գործընթացի վրա:

3. Վերլուծության են ենթարկվել տարածաշրջանում ԱՄՆ-ՌԴ շահերի բախման և Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի և Հարավային Օսիայի հիմնահարցերի լուծման խնդրում ռուս-ամերիկյան դիմակայության կամ անհաշտ մրցակցության գործընթացները, որոնց պայմաններում Հարավային Կովկասի երկրները դատապարտված են բալանսավորել իրենց քաղաքականությունը Մոսկվայի և Վաշինգտոնի միջև՝ փորձելով զոհ չգնալ նրանց աշխարհաքաղաքական նկրտումներին:

4. Նորովի լույս է սփռվել Հարավային Կովկասում ռուս-ամերիկյան մրցակցության կարևոր բաղադրիչներից մեկի՝ այդ գետերությունների կողմից Թուրքիայի տարածաշրջանային հավակնությունների նկատմամբ վեաբերմունքի հարցին, որն ամբողջանում է ռուս-թուրքական և ամերիկա-թուրքական հարաբերությունների խճանկարում՝ մեծապես ազդելով հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների հանգուցալուծման վրա:

5. Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների շրջանակներում վերլուծության է ենթարկվել համաշխարհային ուժային կենտրոնների և տարածաշրջանային պետությունների վարած քաղաքականությունը Հարավային Կովկասում՝ արձանագրելով, որ այդ տարածաշրջանի անվտանգության ճարտարապետությունը մեծապես պայմանավորված է ԱՄՆ-ՌԴ և ուժային հայտնի այլ կենտրոնների համագործակցության մշակույթով և շահերի համադրմամբ, այլ ոչ թե առճակատմամբ:

6. Հետազոտվել են ինքնորոշման իրավունքի կիրառման առանձնահատկությունները միջազգային իրավունքում և թեմայի վերաբերյալ իրավական փաստաթղթերը և դատական նախադեպերը, ինչպես նաև առանձին օրինակներ՝ տարբեր տարածաշրջաններում ինքնորոշման իրավունքի իրականացման վերաբերյալ, հիմնավորվել է, որ արցախահայության ինքնորոշման իրավունքի հարցի լուծումը անհրաժեշտ է տեղափոխել միջազգային համապատասխան ատյաններ, զուգահեռներ են անցկացվել Կոսովոյի ինքնորոշման նախադեպի, դրանում «անջատում հանուն փրկության» սկզբունքի կիրառման և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի միջև, մինչև 2023թ. ազգային ողբերգությունը առաջարկվել է արցախահայությանը սպառնացող գոյութենական վտանգի չեզոքացման համար կիրառել «անջատում հանուն փրկության» սկզբունքը, ինչի գործարկման համար անհրաժեշտ է միջազգային մեխանիզմների ներդրում՝ համապատասխան իրավասու մարմինների՝ այդ թվում ՄԱԿ Անվտանգության Խորհրդի և ՄԱԿ Արդարադատության Միջազգային դատարանի կողմից՝ այդ ամենի համատեքստում ներկայացնելով նաև արցախյան հիմանախնդրի կարգավորման մերօրյա հնարավորությունները:

7. Լուսաբանվել են ՌԴ, ԱՄՆ և համաշխարհային աշխարհաքաղաքական այլ խոշոր կենտրոնների (Ֆրանսիա, Չինաստան, Հնդկաստան), ինչպես նաև տարածաշրջանային դերակատարների (Իրան, Թուրքիա) որդեգրած քաղաքականության դրդապատճառներն ու նրբերանգները արցախյան երկրորդ պատերազմում և ներկայացվել են դրանից հետո ստեղծված նոր իրավիճակում Հայաստանի առջև ծառացած խնդիրներն ու անելիքները՝ հանդես գալով համապատասխան առաջարկություններով:

Աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը: Հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը կայանում է նրանում, որ ուսումնասիրության մեջ առաջ քաշված գաղափարները, մոտեցումները, վերլուծությունները, եզրահանգումները և կատարված առաջարկությունները թերևս կարող են օգտակար լինել գիտակրթական գործունեություն իրականացնող շրջանակներին, ինչպես նաև աշխարհաքաղաքական նոր իրավիճակում նոր մարտահրավերների առջև կանգնած, բայց միևնույն ժամանակ նոր հնարավորություններ ստացած հայաստանյան համապատասխան կառույցներին:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից՝ ութ ենթագլուխներով, եզրակացություններից ու առաջարկություններից և օգտագործված գրականության ցանկից: Տեքստի ծավալը՝ ներառյալ գրականության ցանկը 175 էջ է:

Աշխատանքի փորձաքննությունը:

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի կողմից, իսկ ուսումնասիրության դրույթներն արտացոլվել են գրախոսվող պարբերական գիտական հրատարակություններում հրապարակված հեղինակի գիտական հոդվածներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության օբյեկտը և առարկան, աշխատանքի նպատակն ու խնդիրները, ներկայացվել են ուսումնասիրության գիտական նորույթը, ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը, քննական վերլուծության է ենթարկվել թեմային վերաբերող աղբյուրագիտական բազան:

Աշխատանքի առաջին գլուխը՝ վերանագրված **«Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների ծագումնաբանությունը և**

դրանց համեմատական բնութագիրը» կազմված է հինգ ենթագլուխներից և նվիրված է Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Աբխազիայի էթնոքաղաքական հակամարտությունների պատմությանը, ժամանակագրությանը, տարաբնույթ ասպեկտներին, համեմատական վերլուծությանը ու ներայիս իրավիճակին:

Առաջին՝ **«Ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացման և նոր պետությունների ստեղծման գործընթացների առանձնահատկություններն ու ընդհանրությունները»** ենթագլխում ներկայացվել է ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացման և նոր պետությունների ստեղծման միջազգային փորձը, ինչպես նաև համապատասխան գործընթացների ընդհանրություններն ու յուրահատկությունները, որոնց համեմատական վերլուծությունը կարևոր նշանակություն ունի հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների համակողմանի լուսաբանման համար:

Երկրորդ՝ **«Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման տեսլականը ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացման համատեքստում»** ենթագլխում իրավական ակտերի և դատական նախադեպերի լույսի ներքո ներկայացվել են միջազգային իրավունքում ինքնորոշման իրավունքի կիրառման ընդհանրություններն ու առանձնահատկությունները և զանազան տարածաշրջաններում ազգերի ինքնորոշման իրավունքի դրսևորումների վերաբերյալ կոնկրետ օրինակներ, արցախահայության ինքնորոշման իրավունքի իրականացման հետ կապված զուգահեռներ են անցկացվել, մասնավորապես՝ Կոսովոյի ինքնորոշման նախադեպի և դրանում «անջատում հանուն փրկության» սկզբունքի կիրառման և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի միջև:

Երրորդ՝ **«Հարավային Օսիայի հիմնախնդիրը»** ենթագլխում ներկայացվել են վրաց-հարավօսական հակամարտության առաջացման պատճառները, փուլերը, բանակցային գործընթացը, հանգուցալուծման հնարավորությունները և 2008թ. ռուս-վրացական պատերազմի հետևանքները Հարավային Օսիայի հիմնախնդրի կարգավորման համատեքստում:

Չորրորդ՝ **«Աբխազիայի հիմնախնդիրը»** ենթագլխում լուսաբանվել են վրաց-աբխազական հակամարտության ծագումնաբանությունը, փուլերը, կարգավորման գործընթացը և 2008թ. ռուս-վրացական «հնգօրյա» պատերազմի նշանակությունը աբխազական թնջուկի հանգուցալուծման համար:

Հինգերորդ՝ **«Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների համեմատական բնութագիրը դրանց կարգավորման գործընթացների համատեքստում»** ենթագլխում անդրադարձ է կատարվել Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և

Աբխազիայի էթնոքաղաքական հակամարտությունների համեմատական վերլուծությանը, դրանց առանձնահատկություններին ու ընդհանրություններին՝ ընդգծելով, որ այդ հակամարտությունների արդարացի հանգուցալուծումը կարևոր նշանակություն կունենա Հարավային Կովկասում տևական խաղաղություն հաստատելու համար՝ նպաստելով տարածաշրջանային և միջազգային անվտանգության ապահովմանը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Աբխազիայի հիմնախնդիրները աշխարհաքաղաքական մրցակցության պայմաններում»** գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից և նվիրված է հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների վրա ռուս-ամերիկյան աշխարհաքաղաքական մրցակցությանը և այդ երկրների շահերի խաչաձևման ազդեցությանը, ինչպես նաև արցախյան երկրորդ պատերազմին՝ համաշխարհային և տարածաշրջանային դերակատարների դիրքորոշումների համատեքստում:

Առաջին՝ **«ՌԴ-ԱՄՆ աշխարհաքաղաքական մրցակցությունը հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտություններում»** ենթագլխում վերլուծության են ենթարկվել Հարավային Կովկասում ՌԴ-ԱՄՆ աշխարհաքաղաքական մրցակցության տարաբնույթ ասպեկտները և այդ երկրների շահերի խաչաձևման հնարավոր ազդեցությունը Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Աբխազիայի հիմնահարցերի կարգավորման վրա: Բացահայտվել են ռուս-ամերիկյան համագործակցության բացակայության հետևանքները հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների հանգուցալուծման հարցում:

Երկրորդ՝ **«Ցախյան երկրորդ պատերազմը ՌԴ-ԱՄՆ դիրքորոշումների համատեքստում»** ենթագլխում բացահայտվել են ՌԴ-ի և ԱՄՆ-ի իրականացրած քաղաքականության դրդապատճառները արցախյան երկրորդ պատերազմի ժամանակ ու դրան հաջորդած ժամանակահատվածում, լուսաբանվել է ռուս-ամերիկյան շահերի խաչաձևման հնարավոր ազդեցությունը ղարաբաղյան հիմնախնդրի հանգուցալուծման վրա:

Երրորդ՝ **«Արցախյան երկրորդ պատերազմում համաշխարհային և տարածաշրջանային դերակատաների դիրքորոշումների ազդեցությունը ՌԴ-ԱՄՆ մրցակցության վրա»** ենթագլխում ներկայացվել են Ֆրանսիայի, Չինաստանի, Հնդկաստանի, ինչպես նաև Իրանի և Թուրքիայի որդեգրած դիրքորոշումները 2020թ. 44-օրյա պատերազմի ժամանակ և այդ դիրքորոշումների ազդեցությունը ռուս-ամերիկյան մրցակցության վրա: Վերլուծության է ենթարկվել նաև արցախյան երկրորդ պատերազմից հետո ստեղծված նոր իրավիճակը, որով պայմանավորված՝ մասնավորապես, ներկայացվել են համապատասխան առաջարկություններ այդ ժամանակաշրջանում Հայաստանի և Արցախի առջև կանգնած խնդիրները

լուծելու և հայկական երկու պետություններին սպառնացող մարտահրավերներին դիմագրավելու վերաբերյալ:

«Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում ատենախոսության մեջ կատարված վերլուծությունների արդյունքում ներկայացվել են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ: Այդ եզրակացություններից նպատակահարմար է առանձնացնել հետևյալները՝

1. Տարածաշրջանում ԱՄՆ-ՌԴ շահերի բախման և Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի և Հարավային Օսիայի հիմնահարցերի լուծման խնդրում ռուս-ամերիկյան դիմակայության կամ անհաշտ մրցակցության պայմաններում Հարավային Կովկասի երկրները դատապարտված են բալանսավորել իրենց քաղաքականությունը Մոսկվայի և Վաշինգտոնի միջև՝ փորձելով զոհ չգնալ նրանց աշխարհաքաղաքական նկրտումներին: Հարավկովկասյան տարածաշրջանի անվտանգության ճարտարապետությունը մեծապես պայմանավորված է ԱՄՆ-ՌԴ և ուժային հայտնի այլ կենտրոնների համագործակցության մշակույթով և շահերի համադրմամբ, այլ ոչ թե առճակատմամբ:

2. 2007թ. մյունխենյան իր ելույթում ՌԴ նախագահ Պուտինը հայտարարեց, որ Կոսովոյի ճանաչումը սխալ էր և կարող է նախադեպ հանդիսանալ այլ տարածաշրջաններում էթնիկ հակամարտությունների լուծման համար, ինչը կարող է անկանխատեսելի հետևանքներ ունենալ: Որոշ ժամանակ անց դրան հաջորդեցին Աբխազիայի և Հարավային Օսիայի ճանաչումը Ռուսաստանի կողմից: Միջազգային իրավունքի նորմերը սեփական շահերին համապատասխան մեկնաբանելու և ուժի դիրքերից իրենց համար շահավետ լուծումներ պարտադրելու խոսուն օրինակներ են 2008թ. գարնանը և աշնանը ԱՄՆ և ՌԴ արձագանքները նախ Կոսովոյի, ապա Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախության միակողմանի հռչակումներին: Գարնանը Միացյալ Նահանգները ճանաչեց Կոսովոյի անկախությունը, իսկ Ռուսաստանը դա համարեց ապօրինի և միջազգային իրավունքի նորմերին հակասող: Տարեվերջին, Աբխազիայի և Հարավային Օսիայի դեպքերում իրավիճակը կրկնվեց, բայց Վաշինգտոնի և Մոսկվայի հակառակ դերակատարմամբ: Հատկանշական է, որ ոչ ԱՄՆ-ը, ոչ ՌԴ-ն որևէ բացատրություն չներկայացրեցին ընդամենը մի քանի ամսում իրենց դիրքորոշումները 180 աստիճանով փոխելու մասին:

3. ՌԴ-ն և ԱՄՆ-ն միջազգային իրավունքի նորմերը փորձում են համապատասխանեցնել սեփական շահերին և կոնկրետ իրավիճակներում այդ նորմերը կարող են դառնալ կարևոր փաստարկ հակամարտությունների լուծման համար:

4. Չնայած միջազգային հարաբերությունների, մասնավորապես՝ գերտերությունների շահերն ընդգրկող տարածաշրջաններում առկա

հակամարտությունների լուծումների շարժիչ ուժը մնում է պետությունների շահը, սակայն կոկրետ իրավիճակներում միջազգային իրավունքի նորմերը կարող են դառնալ կևևոր փաստարկ չլուծված հակամարտությունների հանգուցալուծման համար: Այդ տեսակետից, թեև Կոսովոյի անկախությունը 2008թ. ճանաչել էր ավելի քան 70 երկիր՝ այդ թվում ԱՄՆ-ը, Եվրամիության ու ՆԱՏՕ-ի անդամ բազմաթիվ պետություններ, բայց ի վերջո անհրաժեշտություն առաջացավ, որպեսզի հստակեցվի Կոսովոյի հիմնահարցի լուծման իրավական կողմը և այն ՄԱԿ Գլխավոր Ասամբլեայի որոշմամբ դարձավ Արդարադատության միջազգային դատարանի քննության առարկա: Այսպես, 2010թ. հուլիսի 22-ին այդ դատարանը խորհրդատվական եզրակացություն տվեց, որի համաձայն Կոսովոյի անկախության հռչակագիրը չի հակասում միջազգային իրավունքին, իսկ սեպտեմբերին ՄԱԿ Գլխավոր Ասամբլեան որոշում ընդունեց Կոսովոյի անկախության հռչակումը միջազգային իրավունքին համապատասխանելու մասին: Այսինքն, անգամ գերտերություններն են ստիպված լինում այս կամ այն ձևով հաշվի նստել միջազգային իրավունքի հստակորեն սահմանված նորմերի հետ: Իսկ արցախյան հիմնախնդրի արդարացի լուծման համատեքստում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության համար, հասկանալի պատճառներով, միջազգային իրավունքի նորմերի բաղադրիչը հիմնական կռվաններից մեկն է, եթե չասենք գլխավորը, որը հնարավորինս պետք է զուգակցել ուժային գործոնի հետ:

5. Ռուսաստանի Դաշնության կողմից Հարավային Օսիայի անկախության ճանաչումը չլուծեց ռազմական գործողությունների վերսկսման վտանգը, որովհետև հակամարտության կողմերի՝ մասնավորապես, Ռուսաստանի և Վրաստանի միջև չկնքվեց հաշտության պայմանագիր: Ավելին, այդ քայլով Մոսկվան միջնորդ-խաղաղարարից վերածվեց նախկին Խորհրդային Վրաստանի երկու ինքնավար միավորների՝ Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախության իրավական երաշխավորի՝ իր վրա վերցնելով որոշակի ռիսկեր՝ ընդհուպ մինչև վերջիններիս անվտանգությունն ապահովողի դերակատարությունը:

6. 2008թ. օգոստոսյան «Սարկոզի-Մեդվեդև» պլանը վերաբերում էր Հարավային Օսիային և Աբխազիային: 2008թ. օգոստոսի 26-ին Ռուսաստանի Դաշնությունը ճանաչեց Աբխազիայի անկախությունը, իսկ 2009թ.ապրիլի 30-ին Ռուսաստանի Դաշնության և Աբխազիայի միջև կնքվեց «Աբխազիայի պետական սահմանների անվտանգությունը համատեղ ջանքերով պաշտպանելու մասին» պայմանագիրը, որի համաձայն Աբխազիայում տեղակայվում էին ռուսական սահմանապահ ուժեր: Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունը ճանաչելով Ռուսաստանը փաստորեն զրկվեց հարավկովկասյան տարածաշրջանում անաչառ ու անկողմնակալ միջնորդ-խաղաղարարի քաղաքական, իրավական և բարոյական

դերակատարությունից՝ միաժամանակ Մոսկվան դադարեց Յալթայի կոնֆերանսի (1945թ.) հռչակած աշխարհակարգը կրողը լինելուց, իսկ ՄԱԿ Անվտանգության Խորհրդի մշտական անդամներ Միացյալ Նահանգները, ֆրանսիան և Մեծ Բրիտանիան ճանաչելով Կոսովոյի անկախությունը վերստին ձերբազատվեցին այդ աշխարհակարգից՝ այդպիսով կատարելով աշխարհաքաղաքական լուրջ նշանակություն ունեցող քայլ:

7. 2000-ականների երկրորդ կեսից հետո ԱՄՆ և Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ զգալի փոփոխություններ տեղի ունեցան հարավկովկասյան տարածաշրջանում, որոնք կապված էին երկու կարևոր իրադարձությունների՝ 2008թ. ռուս-վրացական պատերազմի և 2020թ. ղարաբաղյան երկրորդ պատերազմի հետ: 2003թ. վրացական «վարդերի» հեղափոխությունից հետո Վրաստանի արտաքին քաղաքականությունը ենթարկվեց զգալի փոփոխությունների: Մինչ 2003թ. Վրաստանի իշխանությունները Հարավային Կովկասը ընկալում էին որպես ռուսական ազդեցության գոտի և փորձում էին բալանսավորված քաղաքականություն վարել Արևմուտքի և Ռուսաստանի հետ: Վրաստանը ընդունում էր նաև Ռուսաստանի միջնորդությունը վրաց-հարավօսական և վրաց-աբխազական հակամարտություններում՝ հաշվի առնելով, Ռուսաստանի կարևոր դերը 1994թ. պատերազմի դադարեցման և բանակցային գործընթացի վերսկսման գործում: Սակայն, Սակաշվիլիի իշխանության գալով, Վրաստանը բռնեց եվրոինտեգրման և ՆԱՏՕ-ին անդամակցության ճանապարհը, ինչպես նաև սկսեց մեղադրել ՌԴ-ին՝ աբխազական և հարավօսական հակամարտությունները որպես Վրաստանի վրա ճնշում գործադրելու միջոց օգտագործելու, անջատողականներին զինելու և նրանց ռուսական քաղաքացիություն շնորհելու մեջ: 2008թ. ռուս-վրացական պատերազմը ավարտվեց ՌԴ-ի կողմից Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախության ճանաչմամբ:

8. Հարավային Կովկասում ԱՄՆ-ի և Ռուսաստանի քաղաքականության վերանայման երկրորդ կարևոր պատճառը 2020թ. ղարաբաղյան 44-օրյա պատերազմն էր: Տեսնելով Արևմուտքի ակտիվության նվազումը ղարաբաղյան հակամարտությունում՝ Ռուսաստանը և Թուրքիան փորձեցին կիրառել Սիրիայում և Լիբիայում իրականացրած մոդելը նաև Հարավային Կովկասում՝ բաժանելով այնտեղ ազդեցության գոտիները: Թրամփի վարչակազմը չէր միջամտում այդ քաղաքականությանը՝ պահպանելով լոյալ վերաբերմունք Ռուսաստանի հանդեպ և սևեռելով իր ուշադրությունը դեպի Չինաստան (տնտեսական պատերազմներ) և Իրան (միջուկային խնդիր): Այդ ժամանակ Ռուսաստանի Դաշնությունը և Թուրքիան փաստորեն քարտ բլանշ էին ստացել Միացյալ Նահանգներից, որ Վաշինգտոնը չի միջամտի Անկարայի և Մոսկվայի ազդեցության գոտիների բաժանման գործընթացին: Սակայն, Բայդենի վարչակազմի իշխանության գալուց հետո ռուս-ամերիկյան

հարաբերությունները սրվեցին, վերածվեցին բաց առճակատման և նույնիսկ անձնական սուր վիրավորանքների: Այս ամենի ֆոնին ղարաբաղյան երկրորդ պատերազմում Թուրքիայի դերը և հավակնությունները, ռուս-թուրքական գործակցությունը ռազմական ոլորտում, հակադրությունը ՆԱՏՕ-ի քաղաքականությանը, Մինսկի խմբից Արևմուտքին դուրս մղելու փորձերը, Սիրիայում ԱՄՆ դաշնակից համարվող քրդերի տարածքների ռմբակոծումը չէր կարող չառաջացնել ԱՄՆ դժգոհությունը:

9. Վաշինգտոնի համար Ադրբեջանն ունի աշխարհաքաղաքական և ռազմավարական նշանակություն, նախ և առաջ նրանով, որ այդ երկիրը անմիջականորեն սահմանակից է Իրանին և հնարավոր ռազմական գործողությունների ժամանակ Միացյալ Նահանգների համար Ադրբեջանը կարող է կարևոր հենակետ դառնալ աշխարհաքաղաքական ու աշխարհագրական առումով՝ մեծացնելու Իրանի շրջափակման գոտին և Վաշինգտոնին հնարավորություն տալով անհրաժեշտության դեպքում օգտագործելու Արևելքն Արևմուտքին կապող հանգույցը նաև ռազմական առումով: ԱՄՆ-ի համար Ադրբեջանը կարևոր է նաև նրանով, որ վերջինս նավթագազախողովակաշարերով կապված է արևմտյան շուկաների հետ և Միացյալ Նահանգների համար դեպի էներգակիրներով հարուստ միջինասիական տարածաշրջան ելք է ապահովում: Վրաստանը Վաշինգտոնի համար՝ մասնավորապես, կարևորվում է նրանով, որ այստեղով են անցնում Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատար և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատար խողովակաշարերը, որոնք Միացյալ Նահանգների համար կարևոր նշանակություն ունեն տարածաշրջանային հարցերում առանցքային դերակատարություն ունենալու առումով: Բացի այդ, Վրաստանը սահմանակից է հարավկովկասյան տարածաշրջանում Վաշինգտոնի հիմնական մրցակից Մոսկվային՝ առավել ևս, որ Վրաստանի ենթակառուցվածքները հնարավորություն են տալիս Միացյալ Նահանգներին որոշակիորեն վերահսկելու տրասնպորտային հոսքերը դեպի Թուրքիա և Հայաստան, ապահովելու կասպյան էներգակիրների տարանցումը դեպի արևմտյան շուկաներ:

10. Հարավկովկասյան էթնոքաղաքական երեք հակամարտություններում էլ Ռուսաստանը որդեգրել է տարբեր քաղաքականություն և բոլոր կողմերը ՌԴ-ից ունեն ուրույն սպասելիքներ. Վրաստանը մինչև 2008թ. մասնակցում էր Ռուսաստանի միջնորդությամբ Հարավային Օսիայի և Աբխազիայի հետ ընթացող բանակցություններին՝ հույս փայփայելով որ Ռուսաստանը կառաջնորդվի տարածքային ամբողջականության սկզբունքով: Ադրբեջանը նույնպես ՌԴ հետ շփումներում արծարծում էր տարածքային ամբողջականության խնդիրը՝ տողատակերում ՌԴ-ին մեղադրելով Հայաստանի վրա բավարար ճնշում չգործադրելու մեջ և շահարկում էր ԵՏՄ մտնելու հարցը՝ այն կապելով ղարաբաղյան խնդրի հետ և փորձելով

զիջումներ կորզել Ռուսաստանից: Հայաստանը հույս էր փայփայում, որ ՌԴ-ն կնպաստի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացմանը և կպաշտպանի իր անվտանգությունը՝ Ադրբեջանի և Թուրքիայի ագրեսիայի դեպքում:

11. Աբխազիայի իշխանությունները հասկանալով, որ ՌԴ-ն հանդիսանում է իր անվտանգության երաշխավորը կողմ են արտահայտվում վերջինիս հետ ռազմավարական համագործակցության խորացմանը, սակայն ցանկանում են պահպանել իրենց անկախությունը: Աբխազիան ձգտում է լինել ինքնուրույն միավոր՝ չձուլվելով և չդառնալով ՌԴ կցորդը, սակայն պահպանել Ռուսաստանի պրոտեկտորատը: Ի տարբերություն Աբխազիայի, Հարավային Օսիան ցանկանում է վերամիավորվել ՌԴ կազմում գտնվող Հյուսիսային Օսիայի իր եղբայրների հետ և Ռուսաստանի հետ ավելի խորը ինտեգրման կողմանկից է: Հատկանշական է նաև, որ եթե ՌԴ-ն ճանաչում է Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախությունը, ապա Լեռնային Ղարաբաղի հարցում Ռուսաստանը որդեգրել էր այլ քաղաքականություն: Ավելին, ժամանակին Մոսկվան բացահայտ հայտարարում էր Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը ճանաչելու մասին՝ նշելով, որ նույնիսկ Հայաստանը չի ճանաչել ԼՂ անկախությունը՝ շատ լավ հասկանալով, որ այդ քայլը փաստացի կնշանակեր ԵԱՀԿ Մինսկի խմբի (որի համանախագահող երկիր է նույն Ռուսաստանը) հովանու ներքո իրականացվող բանակցային գործընթացից Հայաստանի դուրս գալը: Իսկ դա կնշանակեր, որ միջազգային հանրության աչքում Հայաստանը կներկայանար որպես դեստրուկտիվ և բանակցությունները տորպետահարող կողմ:

12. Ղարաբաղյան երկրորդ պատերազմը և դրա հետևանքները չափազանց ուսանելի են համաշխարհային (ԱՄՆ, ՌԴ, Ֆրանսիա, Հնդկաստան, Չինաստան) և տարածաշրջանային (Իրան, Թուրքիա) դերակատարների դիրքորոշումների բացահայտման պարագայում՝ կենսական անհրաժեշտություն դարձնելով Հայաստանի Հանրապետության և Արցախի կողմից դասեր քաղել այդ ամենից: Այդ տեսակետից միջազգային հարաբերությունների բնագավառի և մասնավորապես հակամարտությունների հանգուցալուծման գործընթացների առանցքային հարցերից մեկը քաղաքական ռեալիզմի խտացում հանդիսացող «ուժն է ծնում իրավունք» թեզի և իրավունքի՝ որպես միջազգային հարաբերությունների ու հակամարտությունների կարգավորման մեխանիզմի փոխհարաբերության հարցն է: Ակնհայտ է, որ միջազգային հարաբերություններում, հակամարտությունների կարգավորման գործընթացներում ուժի գործոնն ունի վճռորոշ նշանակություն՝ առավել ևս, եթե օրինակ, հակամարտող կողմերը միմյանց նկատմամբ բացահայտ առավելություն չունեն: Միջազգային հարաբերություններում ուժի գործոնի դոմինանտ լինելու ցայտուն դրսևորումներից է այն, որ ՄԱԿ Անվտանգության խորհրդի մշտական

անդամները վետոյի իրավունքով օժտված գերտերություններն են: Բայց ակնհայտ է նաև, որ հենց իրավունքն է հնարավորություն տալիս, որպեսզի իրավական գործընթացների արդյունքում համապատասխան փաստաթղթերում ամրագրվի պատերազմների կամ հակամարտությունների հանգուցալուծման փաստը՝ թերևս կասկածի տակ դնելով «իրավունքը թույլին պարտադրված ուժեղի կամքն է» թեզի կենսունակությունը: Հետևաբար՝ «ուժ, թե իրավունք» հարցադրման պատասխանը թերևս ուժի և իրավունքի զուգակցման ու համադրության հարթությունում է:

13. Այս փուլում գնալ սահմանազատման, այն էլ՝ ԽՍՀՄ անօրինական ու կամայականորեն գծված քարտեզներով՝ չբարձրացնելով 1921թ. Մոսկվայի պայմանագրի անօրինական լինելու հարցը և չդիմել ՄԱԿ Արդարադատության միջազգային դատարան՝ սահմանների ճշգրտման նպատակով, կնշանակի անտեսել Հայաստանի ու Արցախի կենսական շահերը: ՄԱԿ Արդարադատության միջազգային դատարանում պետք է բարձրացվի նաև Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի օրինական իրացման հարցը: Ադրբեջանը ներկայացնում է կեղծ «փաստեր», թե իբր Արցախը միշտ եղել է Ադրբեջանի կազմում, ՀՀ-ի և Ադրբեջանի միջև սահմանը պետք է գծվի ԽՍՀՄ քարտեզներով, միաժամանակ հրաժարվում է ԽՍՀՄ ժառանգությունից և իրեն համարում է 1918-1920թթ. Ադրբեջանի Առաջին Հանրապետության իրավահաջորդ: Այդ պայմաններում Հայաստանը նույնպես պետք է իրեն հռչակի Հայաստանի Առաջին Հանրապետության իրավահաջորդ, Ազգերի լիգայի անդամ, որից հետո մեխանիկորեն առաջ կգա Ազգերի լիգայի՝ 1920 թ. փետրվարի 24-ի Հայաստան-Ադրբեջան սահմանի վճռահատման առաջարկը հիմք ընդունելու հարցը: Եթե Հայաստանը ճանաչի Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ապա այդ տարածքի սահմանները պետք է որոշի ՄԱԿ Արդարադատության միջազգային դատարանը՝ միջազգային իրավունքին համապատասխան: Ադրբեջանի հետ սահմանազատումը պետք է իրականացվի Ադրբեջանի Առաջին Հանրապետության սահմաններով, քանի որ Ադրբեջանն անվավեր է ճանաչել ԽՍՀՄ իրավական ակտերը: Նույնը վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հետ Ադրբեջանի սահմաններին:

14. Հասնելով 1921թ. Մոսկվայի պայմանագրի անօրինականության ճանաչմանը՝ Հայաստանը գոնե կկարողանա չեզոքացնել Թուրքիայի ակտիվ դերը հայ-ադրբեջանական հակամարտությունում՝ հետագա սերունդներին չզրկելով իրենց օրինական իրավունքներից: Այդ համատեքստում՝ որպես Հայաստանի Առաջին Հանրապետության իրավահաջորդ և Ազգերի լիգայի անդամ՝ հայ-թուրքական սահմանների ճշգրտման նպատակով Հայաստանը պետք է դիմի ՄԱԿ Արդարադատության միջազգային դատարան՝ ներկայացնելով, մասնավորապես՝ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Թուրքիա-Հայաստան սահմանի վերաբերյալ (ստորագրվել է 1920թ. նոյեմբերի 22-ին) այն է՝ Հայաստանի և Թուրքիայի դիմումների

հիման վրա իրականացված սահմանազատման արդյունքները, որը ունի միջազգային ուժ ու մանդատ և ենթակա է պարտադիր կատարման դիմող կողմերի համար:

15. 2023թ.. Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության հանցավոր շրջափակումը, առավել ևս Արցախի նկատմամբ ադրբեջանական հրոսակախմբերի սանձազերծած ռազմական ագրեսիան նպատակ էին հետապնդում շարունակելու իրականացնել «Արցախն առանց հայերի» տխրահռչակ քաղաքականությունը, որը ռուս խաղաղապահների թողտվության, դատապարտելի անգործության, լռելայն համաձայնության, եթե կուզեք՝ ռուս-ադրբեջանական «համագործակցության», ինչպես նաև միջազգային հանրության ու կառույցների անընդունելի դիրքորոշման ու անհասցե հայտարարությունների պայմաններում հանգեցրեց արցախահայության էթնիկ զտմանը՝ նրանց համար վերահաս ցեղասպանությունից փրկվելու միակ հնարավորություն թողնելով իրենց պատմական հայրենիքից բռնագաղթելը: Այդ ամենը ԵԱՀԿ Մինսկի խմբի ԱՄՆ, Ֆրանսիա, Ռուսաստան եռանախագահության հռչակած երկու հիմնարար սկզբունքների՝ ինքնորոշման իրավունքի և ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառման արգելքի կոպիտ ոտնահարում է, որը խելամտության և առողջ բանականության կանխավարկածով առաջնորդվելու պարագայում մեղմ ասած նետված ձեռնոց է ՄԱԿ Անվտանգության խորհրդի անդամ վերոհիշյալ եռյակին՝ անկախ արցախյան հիմնախդրի հանգուցալուծման հարցում այդ պետությունների որդեգրած քաղաքականության դրդապատճառներից ու նրբերանգներից և նրանց հետապնդած աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային տարաբնույթ շահերից: Վերոհիշյալի համատեքստում ադրբեջանական ագրեսիայի հետևանքով էթնիկ զտման ենթարկված արցախահայության իրենց հայրենիքից բռնագաղթված լինելու փաստը թերևս չի կարող խոչընդոտ հանդիսանալ Լեռնային Ղարաբաղի հինախնդրի իրական և հայանպաստ կարգավորման համար՝ սույն ատենախոսության մեջ հանգամանորեն ներկայացված մոտեցումները, եզրակացություններն ու առաջարկությունները կյանքի կոչելու հարցում՝ օգտագործելով միջազգային իրավունքի հիմնարար նորմերն ու սկզբունքները և աշխարհաքաղաքական ու հայաստանյան ներքաղաքական համապատասխան գործընթացները:

16. Լեռնային Ղարաբաղի խնդիրը որպես ինքնորոշման խնդիր և 2023թ. ադրբեջանական զինված ագրեսիայի արդյունքում էթնիկ զտման հետևանքով իրենց պատմական հայրենիքից ցեղասպանությունից փրկվելու համար բռնագաղթված ժողորդի հարց պետք է լուծվի ՄԱԿ Արդարադության միջազգային դատարանում:

17. Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի համապարփակ ու վերջնական կարգավորման հարցում Մինսկի խմբի համանախագահ երկրներ ԱՄՆ-ն, ՌԴ-

ն և Ֆրանսիան չեն հակադրում ինքնորոշման իրավունքի սկզբունքը տարածքային ամբողջականության սկզբունքին: Այդ երկրները բազմիցս արձանագրել են, որ արցախյան հիմնահարցը պետք է լուծվի ինքնորոշման իրավունքի հիման վրա՝ 2007թ. սկսած բանակցային լրամշակված փաստաթղթի շրջանակներում:

Հասկանալի պատճառներով՝ այդ թվում նաև քաղաքական էթիկայի հանրաճանաչ կանոնները պահպանելու անհրաժեշտությամբ պայմանավորված ձեռնպահ ենք մնացել վրաց-աբխազական և վրաց-հարավօսական հակամարտությունների կարգավորման վերաբերյալ դեղատոմսեր ներկայացնելու գայթակղությունից՝ ծանրանալով հիմնականում Լեռնային Ղարաբաղի հիմանխնդրի հանգուցալուծման հետ կապված առաջարկությունների վրա, որոնց քաղաքական, քաղաքագիտական և այլ շրջանակների կողմից ինչ որ չափով ուշադրության արժանանալու դեպքում տողերիս հեղինակը իրեն միանգամայն բավարարված կզգա: Այդ տեսակետից **ատենախոսության մեջ կատարված եզրակացությունները հնարավորություն են տալիս ներկայացնել ներքոհիշյալ առաջարկությունները**, որոնք դիտարկվում են՝ Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության ամրապնդման համատեքստում՝

1. Հայաստանի Հանրապետության կարևորագույն անելիքներից մեկը արտաքին քաղաքականության բնագավառի դիվերսիֆիկացումն ու նոր հուսալի դաշնակիցների փնտրտուքն է, որի շրջանակներում անհրաժեշտ է առավելագույնս խորացնել հարաբերությունները ԱՄՆ-ի, Հնդկաստանի, Չինաստանի, Ֆրանսիայի, Հունաստանի, Կիպրոսի, Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի, Պարսից Ծոցի երկրների, Իրանի հետ՝ այդ թվում ռազմաքաղաքական ոլորտում, ինչպես նաև որակապես բարելավել ՌԴ-ի հետ հարաբերությունները:

2. Անհրաժեշտ է առավել գործուն քայլեր ձեռնարկել համաշխարհային տարբեր դերակատարներից, մասնավորապես՝ ԱՄՆ-ից, Հնդկաստանից և Ֆրանսիայից աջակցություն և անվտանգության երաշխիքներ ստանալու համար, ինչն անխուսափելի է ՌԴ ազդեցության գոտիները վերացնելու վերաբերյալ Արևմուտքի դիրքորոշման պայմաններում:

3. Հայ-ադրբեջանական սահմանների ճշգրտման ու տարածքային վեճերի լուծման նպատակով անհրաժեշտ է որպեսզի Հայաստանը դիմի ՄԱԿ Արդարադատության միջազգային դատարան, քանի որ միայն այդ կառուցն է օժտված նման վեճերի լուծման իրավունքով: Հայաստանը պետք է իրեն հռչակի Հայաստանի Առաջին Հանրապետության իրավահաջորդ, Ազգերի լիգայի անդամ, որից հետո մեխանիկորեն առաջ կգա Ազգերի լիգայի՝ 1920 թ. փետրվարի 24-ի Հայաստան-Ադրբեջան սահմանի վճռահատման առաջարկը հիմք ընդունելու հարցը: Եթե Հայաստանը ճանաչի Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ապա այդ տարածքի սահմանները պետք է որոշի ՄԱԿ

Արդարադատության միջազգային դատարանը՝ միջազգային իրավունքին համապատասխան: Որպես Հայաստանի Առաջին Հանրապետության իրավահաջորդ՝ Հայաստանի Ադրբեջանի հետ սահմանազատումը պետք է իրականացավի Ադրբեջանի Առաջին Հանրապետության սահմաններով, քանի որ Ադրբեջանն անվավեր է ճանաչել ԽՍՀՄ իրավական ակտերը: Նույնը վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հետ Ադրբեջանի սահմաններին:

4. Կոսովոն որպես նախադեպ օրինակ բերելով և ներկայացնելով բոլոր իրավական հիմքերը և գոյություն ունեցող նախադեպերը անհրաժեշտ է դիմել ՄԱԿ Արդարադատության միջազգային դատարան՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացումն՝ «անջատում հանուն փրկության» գործընթացի շրջանակներում լուծելու համար՝ առավել ևս 2023թ. ադրբեջանական զինված ագրեսիայի հետևանքով Արցախն էթնիկ զտման ենթարկելու պարագայում՝ շեշտադրելով էթնիկ զտման փաստը:

5. Անհրաժեշտ է դիմել նաև ՄԱԿ միջազգային քրեական դատարան, որտեղ կքննվեն արցախահայության նկատմամբ Ադրբեջանի կողմից իրականացված բոլոր պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործություններն ու ագրեսիան, այդ համատեքստում քայլեր ձեռնարկել միջազգային համապատասխան ատյաններում՝ Ադրբեջանի կողմից Արցախի նկատմամբ միջազգային իրավունքի հանրահայտ նորմերը՝ այդ թվում Մինսկի խմբի երկու հիմնարար սկզբունքները կոպտորեն ոտնահարելու համար:

6. Քայլեր ձեռնարկել Ադրբեջանի կողմից էթնիկ զտման ենթարկված արցախահայության իրենց պատմական հայրենիք վերադարձը և նրանց բոլոր իրավունքների լիարժեք պաշտպանությունը ապահովելու համար՝ միջազգային գործում երաշխիքների ամրագրմամբ:

7. Քայլեր ձեռնարկել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հարցով միջազգային հատուկ մանդատ ունեցող կառույցի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափը պահպանելու և գործունեությունը վերականգնելու համար՝ առավել ևս, որ 2023թ. Ադրբեջանի կողմից Արցախը էթնիկ զտման ենթարկելու պարագայում անգամ որևէ հրապարակային հայտարարություն չի եղել Մինսկի խմբի լուծարման վերաբերյալ: Հակամարտությունների կարգավորման միջազգային պրակտիկայում աննախադեպ երևույթ է, երբ տվյալ հակամարտության (արցախա-ադրբեջանական) լուծման համար ստեղծվել է հատուկ կառույց և դրան անդամակցել են ՄԱԿ Անվտանգության խորհրդի 5 անդամներից երեքը՝ ԱՄՆ-ը, Ֆրանսիան և ՌԴ-ն, որոնք Մինսկի խմբի համանախագահներն են:

8. Անհրաժեշտ է համախմբել Սփյուռքի ներուժը և միջազգային փորձի հիման վրա՝ այդ թվում Իսրայելի օրինակով մշակել լոբբիստական կազմակերպությունների գործունեության հստակ դոկտրին, այլ ոչ թե օգտագործել Սփյուռքը որպես դրամի հավաքագրման միջոց: Հայաստանակենտրոն քաղաքականության իրականացման ու Հայաստան-

Արցախ-Սփյուռք եռամիասնության ամրապնդման շրջանակներում և ելնելով հայկական կապիտալը հայկական քաղաքականություն կամ քաղաքական գործոն դարձնելու անհրաժեշտությունից, Հայաստան-Սփյուռք հարաբերություններում անհրաժշետ է ստեղծել համագործակցության և փոխադարձ շահերի համադրման այնպիսի գործուն մեխանիզմներ (այդ թվում քաղաքական), որը Սփյուռքին կդարձնի նախ և առաջ շահագրգիռ գործոնկեր, այլ ոչ միայն բարեգործ՝ այդպիսով լուրջ հիմքեր ստեղծելով նաև համահայկական, ազգային-պետական ռազմավարական խնդիրներ լուծելու և ծրագրեր իրականացնելու համար:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի ներքոհիշյալ գիտական հոդվածներում.

1. Դալլաքյան Լ., «Հարավկովկավկասյան էթնիկ հակամարտությունների ծագումնաբանությունը և դրանց լուծման բանալիները», Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Լրատու, Երևան 2021թ. 1 (25), էջ 160-168:
2. Դալլաքյան Լ., «ՌԴ-ԱՄՆ մրցակցությունը Հարավային Կովկասում», Պատմություն և Քաղաքականություն գիտական հանդես, Երևան 2021թ., թիվ 3 (14), էջ 102-115:
3. Դալլաքյան Լ., «Թուրքիայի աշխարհաքաղաքական նկրտումները և հակաթուրքական դաշինքի ձևավորման հեռանկարները», ՎԷՄ համահայկական հանդես, 2021թ., թիվ 4 (76), հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 212-233:
4. Դալլաքյան Լ., «Արցախյան հիմնախնդրի լուծման տեսլականը ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացման համատեքստում», Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Լրատու, Երևան 2022թ., 1 (27), էջ 153-167:
5. Դալլաքյան Լ., «Արցախյան երկրորդ պատերազմը և դրա հետևանքները. Համաշխարհային և տարածաշրջանային դերակատարների դիրքորոշումների համեմատական քննություն», ՎԷՄ համահայկական հանդես, 2022թ., թիվ 3 (79), հուլիս-սեպտեմբեր, էջ 226-255:
6. Դալլաքյան Լ., «Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների համեմատական բնութագիրը (1990-2020թթ.), (անգլ.), Պատմաբանասիրական հանդես, 2023, 3 (224), էջ 291-302:

Южнокавказские этнополитические конфликты в контексте геополитических интересов России и США

Резюме

Целью данной диссертационной работы является выявление геополитической конкуренции Российской Федерации и США, конфликта и пересечения интересов этих стран на ход этнополитических конфликтов на Южном Кавказе. Проанализированы генезис этнополитических конфликтов Нагорного Карабаха, Южной Осетии и Абхазии, их сравнительные характеристики, хронология переговорных процессов, ключи к решению конфликтов и российско-американская геополитическая конкуренция в данном контексте. Диссертация состоит из введения, двух глав, заключения и рекомендаций, а также списка использованной литературы.

Во введении обоснована актуальность темы, определены объект и предмет исследования, цель и задачи работы, представлена научная новизна исследования, теоретическая и прикладная значимость диссертации, а также проделан критический источниковедческий анализ темы.

Первая глава работы озаглавлена **«Генезис этнополитических конфликтов Южного Кавказа и их сравнительная характеристика»** и посвящена истории, хронологии, различным аспектам, сравнительному анализу, переговорным процессам и современному положению этнополитических конфликтов Нагорного Карабаха, Южной Осетии и Абхазии. Представлен международный опыт реализации права наций на самоопределение и создания новых государств, со всеми общностями и особенностями, в частности, в связи с реализацией права на самоопределение армян Арцаха проведены параллели между прецедентом самоопределения Косово и применением в нем принципа «отделения во имя спасения» и проблемой Нагорного Карабаха.

Вторая глава диссертации озаглавлена **«Проблемы Нагорного Карабаха, Южной Осетии и Абхазии в условиях геополитического соперничества»** и посвящена влиянию российско-американской геополитической конкуренции на этнополитические конфликты Южного Кавказа. Проанализированы различные аспекты геополитического соперничества между Российской Федерацией и США на Южном Кавказе и раскрыты мотивы политики, реализуемой этими странами во время Второй Арцахской войны. Представлены позиции Франции, Китая, Индии, а также Ирана и Турции в ходе 44-дневной войны, и влияние этих позиций на российско-американское соперничество.

South Caucasian Ethnopolitical Conflicts in the Context of Geopolitical Interests of Russia and the USA

Summary

The aim of this dissertation is to identify the geopolitical competition between the Russian Federation and the USA, the conflict, and the overlap of interests of these countries in relation to the course of ethnopolitical conflicts in the South Caucasus. The genesis of the ethnopolitical conflicts in Nagorno-Karabakh, South Ossetia, and Abkhazia, their comparative characteristics, the chronology of negotiation processes, the keys to conflict resolution, and the Russian-American geopolitical competition in this context are analyzed. The dissertation consists of an introduction, two chapters, a conclusion with recommendations, and a list of references.

The introduction substantiates the relevance of the topic, defines the object and subject of the study, the aim and objectives of the work, presents the scientific novelty of the research, the theoretical and applied significance of the dissertation, and conducts a critical source analysis of the topic.

The first chapter of the work, titled **"The Genesis of Ethnopolitical Conflicts in the South Caucasus and Their Comparative Characteristics,"** is dedicated to the history, chronology, various aspects, comparative analysis, negotiation processes, and the current state of the ethnopolitical conflicts in Nagorno-Karabakh, South Ossetia, and Abkhazia. It presents international experiences in realizing the right of nations to self-determination and the creation of new states, with all commonalities and peculiarities. In particular, parallels are drawn between the precedent of Kosovo's self-determination, the application of the principle of "remedial secession" in it, and the problem of Nagorno-Karabakh in the context of the realization of the right to self-determination of the Armenians of Artsakh.

The second chapter of the dissertation, titled **"The Problems of Nagorno-Karabakh, South Ossetia, and Abkhazia in the Context of Geopolitical Competition,"** is dedicated to the influence of Russian-American geopolitical rivalry on the ethnopolitical conflicts of the South Caucasus. Various aspects of the geopolitical competition between the Russian Federation and the USA in the South Caucasus are analyzed, and the motives of the policies implemented by these countries during the Second Artsakh War are revealed. The positions of France, China, India, as well as Iran and Turkey during the 44-day war, and the influence of these positions on Russian-American rivalry are presented.